

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱԽՍԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳ

Կրթահամալիրի օբյեկտներից յուրաքանչյուրում տեղադրված են էլեկտրաէներգիայի, գազի, ջրի հաշվիչներ՝ սարքին վիճակում՝ օրական ծախսը գրանցելու համար: Հաշվիչներից որևէ մեկի չաշխատելը արտակարգ պատահար է: Օբյեկտի ղեկավարը նշանակում է այն մարդուն (պատասխանատու), ով ամեն օր գրանցում է հաշվիչների ցուցմունքները (պատասխանատուի բացակայության դեպքում նշանակում է ուրիշ անձի): Պատասխանատուն մինչև ժամը 10:00 դրանք գրանցում է կրթահամալիրի կոմունալ ծախսերի ֆայլում: Կրթական օբյեկտի ղեկավարը ամեն օր հետևում է ցուցմունքներին: Ոչ խելամիտ ծախսերի դեպքում պարզում է պատճառը և գրավոր բացատրություն ներկայացնում կրթահամալիրի տնօրենի նշանակած անձին՝ հաշվապահին:

Կրթահամալիրի տնօրենի նշանակած անձը ամեն օր հետևում է կրթահամալիրի կոմունալ ծախսերի ֆայլին: Չլրացրած տվյալների կամ ոչ խելամիտ ծախսերի դեպքում անմիջապես գրավոր զգուշացնում է օբյեկտի ղեկավարին:

Հաշվապահությունը ամեն ամիս վճարման ենթակա գումարը համեմատում է կրթահամալիրի կոմունալ ծախսերի ֆայլում գրանցված տվյալների հետ: Անհամապատասխանության դեպքում այն ճշտում է և պարզում անհամապատասխանության պատճառը: